ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Վ. Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոցի <<Կենսաբանություն>> (12 դասաժամ ռուսերեն ուսուցմամբ դասարաններում), <<Ֆրանսերեն լեզու>> (18 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար (աշխատավարձը՝ ըստ տարիֆիկացիոն մատյանի)

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. ապրիլի 3-ից – ապրիլի 16-ը ներառյալ ժամը 10:00 – 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Փաստաթղթերի ընդունումն ու հայեցակարգը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթն անցկացվելու է Գյումրու N2 ավագ դպրոցում 2024 թվականի ապրիլի 18-ին, ժամը 12:00-ին:
Հասցեն՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհ 11:
Մրցույթում հաղթողների հետ կկնքվի հիմնական աշխատանքային պայմանագիր:
Տեղեկությունների համար զանգահարել 0312 5-05-76 հեռախոսահամարով:

Վ. Թեքեյանի անվան Գյումրու N 2 ավագ դպրոց